ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ
ՀԱՅՈՑ ՄԵԾ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԱՐՄԵՆ ԱՍՐՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից ևեթ Օսմանյան կայսրության երիտթուրքական վարչակարգը ձեռնամուխ եղավ արևմտահայության արմատական ոչնչացման վաղօրոք ընդունած ծրագրի իրագործմանը՝ նպատակ ունենալով տիրանալ նրա պատմական հայրենիքին և մեկընդմիշտ լուծել Հայկական հարցը: Թուրքերը, սակայն, մի շարք վայրերում հանդիպեցին հերոսական դիմադրության: Խոսքն առաջին հերթին վերաբերում է Վանի 1915 թ. ապրիլյան ինքնապաշտպանությանը, որի կազմակերպման գործում հսկայական ավանդ ունեցավ հայ ազատագրական շարժման նվիրյալ, ՀՅԴ Վանի կազմակերպության ղեկավար գործիչներից մեկը՝ Արամ Մանուկյանը (Սարգիս Հարությունի Հովհաննիսյան)։

Ա. Մանուկյանը ծնվել է 1879 թ. մարտի 19-ին Շուշի քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի Ագուլյաց ծխական դպրոցում, ապա 1895 թ. ընդունվել թեմական դպրոց: Այստեղ նա անդամագրվում է հայ ազատագրական շարժման առաջատար ուժ ՀՅԴ-ին՝ իր հետագա կյանքն անմնացորդ նվիրելով կուսակցության առաջադրած նպատակների իրականացմանը: 1901 թ. գարնանը հեռացվելով Շուշիի թեմական դպրոցից՝ ուսումը շարունակում է Երևանի թեմական դպրոցում, որն ավարտում է 1903 թ.[1]: Այնուհետև Արամը փոխադրվում է Բաքու, ապա՝ Գանձակ: 1903 թ. ամռան երկրորդ կեսին անցնելով Կարս՝ Ա. Մանուկյանն ամբողջովին նվիրվում է Արևմտահայաստանի ազատագրության գործին՝ ակտիվորեն մասնակցելով զենք փոխադրող խմբերի կազմակերպմանը: 1903 թ. սեպտեմբերին նա Խանի և Նևրուզի 150 հոգանոց խմբի հետ փորձում է անցնել Արևմտյան Հայաստան, սակայն հիվանդության պատճառով կես ճանապարհից հետ է վերադառնում[2]: 1905 թ. փետրվարի 6-ին Արամը հաստատվում է Վանում՝ նա-

---

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 8, ց. 1, գ. 59, թ. 52:
[2] «Հայրենիք», Բոստոն, 1922, №1, էջ 30:

խապես ՀՅԴ ղեկավարությունից ստանալով համապատասխան հրահանգներ, նաև որպես կուսակցության Վանի կենտրոնական կոմիտեի իրավահավասար անդամ գործելու լիազորություն: Կարճ ժամանակ անց՝ ստանձնելով ՀՅԴ Վանի կազմակերպության ղեկավարությունը, նա, ելնելով ազատագրական շարժման անցյալից, թուրքական լուծը թոթափելու նպատակով եռանդուն գործունեություն է ծավալում՝ ընդհանուր ապստամբության համար անհրաժեշտ հիմքեր ստեղծելու և Վասպուրականի զենք-զինամթերք փոխադրելու ուղղությամբ[3]: Ինչպես իրավացիորեն նկատում է ակադեմիկոս Հ. Սիմոնյանը, Արամը պաշտպանում էր «Հրայրի (Հրայր Դժոխք – Ա. Ա.) այն գաղափարը, որ եթե հայերը պետք է ապստամբություն բարձրացնեն, ապա դա պետք է լինի համաժողովրդական՝ նախապատրաստված բազմակողմանիորեն և հիմնավոր»[4]: Շնորհիվ ձեռնարկված հետևողական և հավասարակշռված քայլերի՝ կարճ ժամանակում ՀՅԴ Վանի կազմակերպությունը բուռն վերելք ապրեց:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Արամն արտահայտվեց նրանց հետ համագործակցելու իր կուսակցության քաղաքական գծի օգտին: Իսկ ՀՅԴ-ն փոխզիջման գիրք էր ընդունել և ձգտում էր հասնել արևմտահայության դրության բարելավմանը Օսմանյան կայսրության շրջանակում՝ խաղաղ ճանապարհով և առանց արտաքին միջամտության: Սակայն կուսակցության և արևմտահայ հասարակական-քաղաքական մյուս ուժերի այս դիրքորոշումը երիտթուրքերը չընդունեցին: Վերջիններս նոր թափով շարունակեցին նախկին վարչակարգի հակահայկական և ազգայնամոլական քաղաքականությունը:

Երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, վասպուրականահայության առաջնորդները՝ օսմանյան խորհրդարանի անդամ Ա. Վռամյանը, Իշխանը և Արամը, կանխատեսելով դրա ողբերգական հետևանքներն արևմտահայության համար, փորձեցին ուժերի ներածին չափով ազդաբնակչությանը հեռու պահել թուրքական իշխանությունների մեծամասշտաբ բռնություններից: Վանում խորհրդակցություն գումարվեց, որտեղ որոշվեց հավաքագրել զորակոչից խուսափել ցանկացող հայ երիտասարդներին: Մեկ-երկու շաբաթ անց երիտասարդների մի խումբ Արամի առաջնորդությամբ ներկայացավ զինվորական ատյանին[5]: Միաժամանակ, կանխատեսելով զորահավաքի դեպքում ժողովրդին սպառնացող վտանգը՝ գաղտնի հրահանգվեց, որ յուրաքանչյուր վայրում «աչքի ընկնող զինվորական ուժերը մնան փախստական, հավաքեն զենքերը և ապահով պահեստներում պահեն»[6]:

Սակայն վասպուրականահայության առաջնորդների խաղաղասիրական ջանքերը ժամանակավոր արդյունք տվեցին, քանզի թուրքերն իրենց անելիքը վճռել էին վաղուց: Ռուս-թուրքական ռազմաճակատի բացումից (1914 թ. հոկտեմբերի 29) և հատկապես Էնվերի փեսա Ջևդեթին Վանի

---

[3] *Նյութեր Հ. Ց. Դաշնակցության պատմության համար (պատրաստեց և խմբագրեց Հ. Տաճատյան). Հ. Գ, Բեյրութ, 1976, էջ 105:*

[4] *Հ. Սիմոնյան. Ազատագրական պայքարի ուղիներում. գիրք I, Երևան, 2003, էջ 628:*

[5] *Հ ԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ, 18-19:*

[6] *Նույն տեղում, թ. 21:*

կուսակալ նշանակելուց հետո նահանգում իրավիճակը խիստ սրվեց: Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուի գիտարկմամբ, Ջևդեթն իր պաշտոնը ստանձնել էր տեղի հայերին «բնաջնջելու որոշ հրահանգներով...»[7]:

1914 թ. դեկտեմբերին Վանի նահանգի Սարայ և Բաշկալե գավառներում սպանվեց շուրջ տաս հազար հայ: Իրավիճակը բարդանում էր: «Ահ ու դողի ամիսներ էինք ապրում, կոտորածը դավառներեն (1914 թ. աշնանային նահանջի հետևանքով) կամաց-կամաց մոտենում էր քաղաքին»,– դրել է Արամ Մանուկյանը 1916 թ.[8]: 1915 թ. հունվար-մարտ ամիսներին բռնություններ տեղի ունեցան Վասպուրականի Աղբակ, Թիմար, Հայոց-Ձոր և այլ գավառներում: Կոտորածներին զոհ գնաց 16000 հայ, ևս 15000-ը ապաստանեց Վանում[9]: Թուրքական բանակում ծառայող հազարավոր հայ զինվորներ կոտորվեցին[10]:

Ի պատասխան թուրքական բռնարարքներին, հայերը սպանեցին մի քանի տասնյակ թուրք ոստիկանների, մի շարք տեղերում կտրեցին հեռագրալարերը[11]: Վռամյանը, Արամը և Իշխանը աշխատում էին զսպել հայերին՝ նպատակ ունենալով հնարավորինս երկարաձգել խաղաղությունը[12]: Միաժամանակ, նրանք իշխանություններից պահանջում էին պատժել հայերի ջարդի ու թալանի մեղավորներին:

Ժողովրդի անվտանգությունն ապահովելու համար նաև որոշակի միջոցառումներ ձեռնարկվեցին: Նախ, հրահանգվեց նոր զինվորներ այլևս չտալ բանակին[13], երկրորդ՝ անակնկալներին դիմագրավելու համար քսանական լավ զինված անձանցից բաղկացած շրջիկ խմբեր ստեղծվեցին: Այդ խմբերի ուժի մասին է խոսում թեկուզ այն փաստը, որ Թիմարի շրջանի Բայրաք գյուղի մոտ Միսակի խումբը Վանից 600 զինվորներով ուղարկված Բյուրհանեդգինի հետ կռվի բռնվելով՝ սպանեց 40-50 զինվոր[14]:

Հայ գործիչները գիտակցում էին, որ իրադրության սառեցման համար անհրաժեշտ է փոխհասկացողություն գտնել թուրք իշխանավորների հետ: Որպես բարի կամքի դրսևորում՝ Վռամյանը, Արամը և քաղաքի հայ երևելիները 1915 թ. մարտի 17-ին մասնակցեցին սահմանադլխից Վան վերադարձող Ջևդեթի ընդունելությանը[15]: Վերջինս, սակայն, դեռևս փետրվարին մտադրվել էր ոչնչացնել Վանի հայությանը[16]:

---

[7] Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի դաղտնիքները. Երևան, 1990, էջ 247:

[8] «Հորիզոն», 7.IV.1916:

[9] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմողներ՝ Մ. Ներսիսյան, Ռ. Սահակյան). Երևան, 1991, էջ 345.

[10] Մ. Ա ր զ ո ւ մ ա ն յ ա ն. Հայաստան. 1914-1917. Երևան, 1969, էջ 317:

[11] Վ. Տ ա տ ր յ ա ն. Հայկական ցեղասպանությունը Խորհրդարանային և Պատմագիտական քննարկումներով. ԱՄՆ, 1995, էջ 50:

[12] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 32-33, գ. 29, թ. 8: «Մշակ», 9.VII.1915:

[13] Հ. Բ ա ր բ ի. Սարսափի երկրին մեջ: Նահատակ Հայաստան (թարգմ.՝ Մ. Շամտանճյան). Կ. Պոլիս, 1919, էջ 80:

[14] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 32:

[15] Ա - Դ օ. Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին. Երևան, 1917, էջ 150-151:

[16] Г. Ф и р б ю х е р. Армения 1915. Уничтожение Турцией культурного народа. Отв. редактор В. Микаелян, Ереван, 1991, с. 59.

Նահանգի կառավարության հետ բանակցող Վռամյանն ու Արամը, ելնելով ազգաբնակչության անվտանգության ապահովման սկզբունքային դրույթից, ձգտում էին հասնել այն բանին, որ զորակոչվեն միայն նախկինում ծառայածները՝ զինվորական ծառայությունը փոխարինելով պատերազմի ընթացքում ամսական երկու ոսկի զինվորական տուրք վճարելով: Սակայն իշխանությունները չընդունեցին այդ առաջարկը: Այնուհետև Արամը հանդես եկավ նոր առաջարկով. քանի որ հայ զինվորներին հիմնականում վերածում էին «ամելեների» և բանվորական աշխատանքներ հանձնարարում, նա առաջարկեց նահանգի ամբողջ փոխադրական գործը հանձնարարել հայերին կամ էլ նրանցից ստանալ փոխադրության արժեքը: Այս առաջարկը ևս մերժվեց[17]: Վանում իտալական հյուպատոսական գործակալ Սպորդոնի հաղորդմամբ ջարդերի դիտավորություն ունեցող իշխանությունները մերժեցին հայ առաջնորդների նույնիսկ ամենաօրինավոր առաջարկները[18]:

Հայասպան ծրագիրը դյուրացնելու նպատակով թուրքական իշխանությունները վարում էին արևմտահայ մտավորական-քաղաքական դործիչներին ոչնչացնելու քաղաքականություն թե՛ կայսրության կենտրոնում և թե՛ նահանգներում: Իտալական հյուպատոսական գործակալի վկայակոչմամբ, խոսքը գնում էր առաջին հերթին տեղի հայ ազգաբնակչության «երեք գլխավոր առաջնորդներին՝ Վռամյանին, Արամին և Իշխանին...» վերացնելու մասին[19]:

1915 թ. ապրիլի 3-ին թուրքական գավառդրության ղոհ գարձավ Իշխանը: Հաջորդ օրը խորհրդակցության պատրվակով կուսակալն իր մոտ հրավիրեց Վռամյանին և Արամին: Կուսակալին ներկայացած Վռամյանն (նա ե Արամը պայմանավորվել էին միասին չայցելել կուսակալին) անմիջապես ձերբակալվեց, տեղափոխվեց Բիթլիսի բանտ, ապա՝ սպանվեց: Արամը ես պատրաստվում էր այցելել կուսակալին, սակայն նրան նախազգուշացրեցին Վռամյանի հետ կատարվածի մասին ե նա Ապորդոնի ընորոշմամբ՝ «ի բարեբախտություն Վանի», չգնաց հանդիպման[20]: Փաստելով Վանի աղգեցիկ գործիչներ Վռամյանի ե Իշխանի սպանության կանխամտածվածությունը՝ Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթը նշել է. «...Ա. Մանուկյանն ալ մեջտեղեն վերցնել ուզած է, սակայն Մանուկյան ավելի ճարպիկ գտնվելով ապստամբած և կուսակալ Ճետեթը փախուստի մատնելով, իր վարչության տակ առժամյա կառավարություն մը հիմնած է»[21]:

Պարզորոշ ըմբռնելով ժամանակի հրամայականը, Մանուկյանն անմիջապես հրահանգեց կուսակցական և ժողովրդական ուժերին պատրաստվել իրադարձությունների անակնկալ զարդացմանը: Միաժամանակ, առճակատումից խուսափելով, ինչպես նաև Իշխանի ու Վռամյանի հետ կատար-

---

[17] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 30:

[18] Հ. Բ ա ր բ ի. նշվ. աշխ., էջ 154:

[19] H. B a r b y. Au Pays de L'Epouvante: L'Armenie Martyre. Paris, 1917, p. 253.

[20] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում..., էջ 346, Օ. Մ խ ի թ ա ր յ ա ն. Վանի հերոսամարտը. Սոֆիա, 1930, էջ 42:

[21] Ռ ի ֆ ա թ Մ ա լ ա ն Զ ա տ ե. Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագիրները. Երևան, 1990, էջ 93:

վածի պատճառները ճշտելու նպատակով նա ապրիլի 4-ին Զևդեթի հետ վերսկսեց բանակցությունները: Սակայն վերջինս պահանջում է անհապաղ հանձնել բոլոր զինապարտներին՝ սպառնալով հիմնահատակ ավերել Այգեստանը: Խուսանավելու քաղաքականությունն այլևս իմաստազուրկ էր: «Մեր կացությունը հուսահատական էր այն ատեն,— նկատել է Արամը:— Ընտրելու մեկ բան միայն կը մնար մեզի համար. կամ անձնատուր ըլլալ և թողուլ որ խողխողեն մեզ իբր ոչխար, կամ մեռնիլ զեն ի ձեռին կռվելով: Այս վերջինը նախընտրեցինք»[22]:

1915 թ. ապրիլի 5-ին Վանի հայությունը ձեռնամուխ եղավ ինքնապաշտպանության կազմակերպմանը: Ստեղծվեց Հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին, որտեղ Ա. Մանուկյանի առաջարկով ընդգրկվեցին փորձառու զինվորականներ՝ դաշնակցականներ Գր. Բուլղարացին, Կայծակ Առաքելը և ռամկավար Արմենակ Եկարյանը[23]: Որոշ ժամանակ անց ինքն էլ մտավ այդ մարմնի մեջ[24] և ղեկավարեց Վան-Այդեստանի ինքնապաշտպանությունը: Արամի գործուն մասնակցությամբ ստեղծվեցին Զինվորական մարմնին ենթակա Զինաբաշխ մարմինը, որն իրականացնելու էր զենք-զինամթերքի պահեստավորումն ու բաշխումը, և Տեղեկատու դիվանը, որի խնդիրն էր իրադարձությունների արձանագրումն ու թռուցիկների հրապարակումը: Այնուհետև ստեղծվեցին զինագործարան, հիվանդանոց, «Հայթայթիչ մարմին», որն օրական 3000 մարդու սնունդ էր ապահովում և այլն: Զինվորական մարմնի քարտուղար Օ. Մխիթարյանի հավաստմամբ՝ «Զինվորական մարմնի և անոր հարակից օրգաններու, ինչպես նաև Վանի հերոսամարտի ամբողջ բարոյական ղեկավարությունը» ընկավ Արամի վրա[25]:

Զինվորական մարմինն անմիջապես ձեռնարկեց ինքնապաշտպանական մեծածավալ աշխատանքներ: Կազմվեց ինքնապաշտպանության հատակագիծ, Այգեստանը բաժանվեց պաշտպանական շրջանների: Ապրիլի 6-ի դրությամբ ստեղծվել էին պաշտպանական հինգ շրջաններ՝ իրենց շրջանապետերով, 50 դիրքեր՝ նույնքան խմբապետերով. զինվորների թիվը 800 էր, որից 400-ը հրացանակիր, 400-ը՝ ատրճանակով զինված[26]: Թուրքական կողմը հայոց դեմ կենտրոնացրել էր 6000-12000 կռվող և 12 թնդանոթ:

Արամը եռուզեռի մեջ էր, զբաղվում էր կազմակերպչական աշխատանքներով: Զինվորական մարմնի միջոցով նա հրահանգում էր ձեռնպահ մնալ հարձակողական քայլերից և հսկել ստրատեգիական կետերը[27]: Սուրհանդակների միջոցով գավառների ազգաբնակչությանը տեղեկացրեց Վանի իրադրության մասին և կարգադրեց պատրաստվել դեպքերի հետագա

---

[22] Ց. Լ ե փ ս ի ո ւ ս. Գաղտնի տեղեկագիր տոքթ. Յոհաննես Լեփսիուսի, Հայաստանի ջարդերը (թարգմ՝ Մ. Շամտանճյան). Կ. Պոլիս, 1919, էջ 106:

[23] Հերոսապատում Մեծ Եղեռնի. Բեյրութ, 1978, էջ 59: Վան-Վասպուրականի հերոսամարտը-75 (կազմ՝ Հ. Փափազյան). Երևան, 1990, էջ 22:

[24] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 39:

[25] Օ. Մ խ ի թ ա ր յ ա ն. Նշվ. աշխ., էջ 54:

[26] Նույն տեղում, էջ 65:

[27] R. H o v a n n i s i a n. Armenian Van/Vaspurakan. USA, 2000, p. 230.

զարգացմանն այն հաշվով, որ Վանում ընդհարումն սկսվելուն պես նրանք տեղերում հարձակվեին թուրքերի վրա[28]:

...Վան-Այդեստանի ինքնապաշտպանությունը[29] սկսվեց 1915 թ. ապրիլի 7-ին: Այդ օրը թուրքերը Սահակ բեյի փոսից, Հաջի Բեքիրի զորանոցից, Թոփրակ կալեի կողմից բացված հուժկու հրետակոծությունից հետո անցան լայնածավալ հարձակման. հայկական դիրքերի համար սպառնալի կացություն ստեղծվեց: Առանձնապես օրհասական էր դրությունը Սահակ բեյի դիրքում: Գիտակցելով պահի լրջությունը՝ Արամը, համապատասխան ցուցումներ տալով Զինվորական մարմնի անդամներին, իր թիկնապահների և մի խումբ ընկերների հետ անմիջապես շտապեց այնտեղ: Հայտնվելով հրացանային և թնդանոթային ուժգին կրակի տակ՝ նա առաջնորդին վայել իր պահվածքով (զինվորներից յուրաքանչյուրի հետ առանձին զրուցում էր, համբուրում նրանց, գոտեպնդում և խորհուրդներ տալիս) բարձրացրեց զինվորների մարտական ոգին[30]: Ռազմական տեսակետից կարևորելով հաղորդակցությունը դիրքերի միջև՝ Արամը դիրքապահներին հանձնարարեց անցուղիներ փորել Սահակ բեյի դիրքից մինչև Թովմասյան դիրքը՝ խոստանալով ուղարկել օգնական բանվորական ուժ:

Ա. Մանուկյանը ծայրահեղ զգուշության կողմնակից էր և գտնում էր, որ ամեն վայրկյան պետք է պատրաստ լինել իրավիճակի բարդացմանը: Կռվի առաջին օրվա երեկոյան, երբ թշնամին ժամանակավորապես դադարեցրել էր հարձակումը, նա հայ ինքնապաշտպաններին կարգադրեց զգոն լինել՝ «առաջն առնելու համար ամեն տեսակ դավադրության»[31], և չսխալվեց: Կարճ ժամանակ անց թշնամին նոր ուժով վերսկսեց հարձակումը և դարձյալ հանդիպեց հայերի անկոտրում դիմադրությանը: Արամի, Զինվորական մարմնի անդամներ Ա. Եկարյանի, Գր. Բուլղարացու և Կայծակ Առաքելի ղեկավարությամբ հայերը ոչ միայն հուսալիորեն պաշտպանվում էին, այլև արժանի հակահարված հասցնում թշնամուն: Ապրիլի 8-ին և 9-ի լույս 10-ի գիշերը հայկական ուժերը, արիություն ու հնարամտություն ցուցաբերելով, գրավեցին թուրքական կարևորագույն հենակետերի վերածված անգլիական հյուպատոսարանի շենքը և Համուդ աղայի զորանոցը: Զորանոցի գրավմանն իր մասնակցությունը բերեց և Արամը[32]:

Աշխարհից լիովին կտրված վանեցիներին խիստ մտահոգում էր ռազմական գործողությունների ապագան. բոլորին պարզ էր ռուսական բանակի ու հայ կամավորների հետ կապ հաստատելու և օգնություն խնդրելու անհրաժեշտությունը: Այդ գործը ևս իր վրա վերցրեց Արամը: Գրվեցին նամակներ և ուղարկվեցին ռազմաճակատի ուղղությամբ: Նամակներից մեկը տեղ էր հասել Դիլմանի ճակատամարտի (ապրիլի 18) նախօրյակին. հաղորդելով վանեցիների հերոսական դիմադրության մասին՝ Արամը ժո-

---

[28] ՀԱԱ, Ֆ. 242, գ. 1, գ. 74, թ. 38:

[29] Այդեստանից մեկուսացված Քաղաքամեջը՝ Վան քաղաքի երկրորդ մասը, ևս դիմեց ինքնապաշտպանության և փրկվեց անխուսափելի թվացող կոտորածներից:

[30] Օ. Մ խ ի թ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 74-75:

[31] Նույն տեղում, էջ 79:

[32] «Աշխատանք», Վան, 17.VII.1915:

ղովրդի փրկության համար անհրաժեշտ էր համարում դրսի շուտափույթ օգնությունը[33]:

Ա. Մանուկյանի գործունեությունը չէր սահմանափակվում միայն Վան-Այգեստանով: Դեռևս ապրիլի 14-ին, ընդունելով թուրքերի դեմ մաքառող շատախցիների պատվիրակությունը, նա հրահանգեց Շատախի, Փեսանդաշտի և Քերծի մարտիկներին վարել բացառապես պաշտպանական մարտեր ու շարունակ լինել ժողովրդի հետ[34]: Ելնելով քաղաքի պաշտպանների բաբոյահոգեբանական, ռազմական ու պարենային կացությունը չծանրացնելու նկատառումներից՝ Արամն արգելեց Շուշանց-Վարագ գծում հավաքված 5000 գավառահայ փախստականների նահանջը Վան և Զինվորական մարմնի մյուս անդամների հետ քայլեր ձեռնարկեց նրանց պաշտպանության համար: Ապրիլի 14-ին Արամի հրահանգով այնտեղ ուղարկվեցին Այգեստանում ապաստանած 15000 գաղթականներից առանձնացված սպառազեն գյուղացիները: Նույն օրը Շուշանց-Վարագ գծի հրամանատար նշանակվեց դաշնակցական գործիչ Շիրինը: Ձեռնարկված քայլերի շնորհիվ տեղի ազգաբնակչությունը մինչև ապրիլի 25-ը դիմադրեց թշնամուն և հետո միայն հարկադրաբար նահանջեց Այգեստան:

Մարտական գործողությունները Վանում նոր թափ ստացան ապրիլի 19-ին: Իրենց հերոսությամբ աչքի ընկան Ա. Եկարյանն ու Կայծակ Առաքելը, որոնց միջամտության շնորհիվ կործանումից փրկվեց Թաղաքյահրեզի շրջանը: Այդ օրը թուրքերը տվեցին 40-ից ավելի զոհ[35]: Թուրքական հարձակումն իր գագաթնակետին հասավ ապրիլի 21-ին: Այգեստանի վրա արձակվեց 500 ռումբ: Արամն այդ օրը տարերքի մեջ էր. նա շարունակ դիրքից դիրք էր անցնում և ոգևորում հայ զինվորներին[36]: Ուժերի գերազույն լարմամբ հետ մղվեցին բոլոր գրոհները: Թշնամուն ոչ մի հաջողություն չբերեց նաև ապրիլի 28-ի հարձակումը, որն ուղեկցվում էր ուժգին ռմբակոծությամբ: Հայոց դիմադրությունն այնքան հերոսական ու կազմակերպված էր, որ թուրքական գրոհներից մեկն առաջնորդող գերմանացի մի սպա, կրած անհաջողությունից հուսահատված, հեռացավ Վանից՝ խոստովանելով, թե այդպիսի դիմադրության չէր սպասում[37]:

Մայիսի 3-ին հայ ինքնապաշտպանները ետ մղեցին թուրքական վերջին դրոհը: Ձկարողանալով կոտրել վանեցիների հերոսական դիմադրությունը և տեղեկանալով ռուսական բանակի առաջխաղացման մասին կուսակալը դադարեցրեց քաղաքի պաշարումը և նահանջեց Բիթլիսի ուղղությամբ: Վանի ինքնապաշտպանությունը պսակվեց հաղթանակով. վանեցիներն իրենց առաջնորդների գլխավորությամբ միասնաբար և վճռականորեն արժանի հակահարված հասցրեցին բազմադարյան ոսոխին:

1915 թ. մայիսի 5-ին Արարատյան կամավորական գնդի հեծելազորը դաշնակցական Խեչոյի հրամանատարությամբ մտավ Վան՝ արժանանալով ցնծագին ընդունելության: Զորավար Թ. Նազարբեկյանի վկայությամբ նրանց դիմավորեց Արամը՝ իր օգնականների և քաղաքի բնակչության

---

[33] Հուշեր Արմենակ Եկարյանի. Կահիրե, 1947, էջ 240:
[34] Օ. Ս խ ի թ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 131:
[35] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 76, թ. 5:
[36] Հերոսապատում Մեծ Եղեռնի, էջ 78:
[37] Հ. Բ ա ր բ ի. նշվ. աշխ., էջ 84:

հետ»: Հերոսամարտի հաղթանակի առթիվ իր և ՀՅԴ հասցեին ասված խեչոյի գովասանքին ի պատասխան, Արամը, որն այդ ընթացքում աչքի էր ընկել ապակուսակցական ոգով, ազնվորեն նշեց, թե Վանում «կուսակցությունը չէ որ գործ տեսավ, այլ ամբողջ ժողովուրդը»[39]: Մայիսի 6-ին Վան հասան կամավորական գնդերի հրամանատարներ Դրոն, Քեռին, Վարդանը, ապա ռուսական բանակի «Բայազետ» զորախմբի հրամանատար զորավար Նիկոլաևը, որին էլ Արամը վանեցիների անունից հանձնեց քաղաքի բանալիները[40]:

Վանի հերոսամարտի շնորհիվ ավելի քան 150 հազար վասպուրականցիներ փրկվեցին անխուսափելի կոտորածներից՝ ապացուցելով, որ թուրք ջարդարարներից աղատվելու միակ ճանապարհը ինքնապաշտպանությունն է: Արևմտահայության գերակշռող մեծամասնությունը, ցավոք, զոհ գնաց թուրքերի կողմից իրականացված ցեղասպանությանը:

Ինչպես իրավացիորեն նկատել է ակադեմիկոս Մ. Ներսիսյանը, «Երիտթուրքերի ոճրագործ քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ շարունակվեց նաև հետագա տարիներին...»[41]:

1917 թ. վերջին ռուսական Կովկասյան ռազմաճակատի քայքայումը թուրքական ներխուժման վտանգի տակ դրեց ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանը: Կասկածից վեր էր, որ թշնամին փորձելու էր նոր նախճիրներ գործել: Ա. Մանուկյանը 1915 թ. հուլիսյան դաղթից հետո հաստատվել էր Թիֆլիսում և ակտիվ մասնակցություն ունեցել երկրամասի ազգային-քաղաքական իրադարձություններին, այնուհետև Հայոց կենտրոնական ազգային և Հայ զինվորական խորհուրդների կողմից իբրև լիազոր գործուղվում է Երևանի նահանգ: Նրա խնդիրն էր ստեղծել ամուր իշխանություն և իրականացնել կազմակերպված զորահավաք: 1917 թ. դեկտեմբերի 18-ին ժամանելով Երևան՝ Ա. Մանուկյանը գերմարդկային ճիգեր գործադրեց հայությանը սպառնացող նոր ողբերգությունը կանխելու համար: Նա առաջադրեց հայ ժողովրդի պաշտպանությանն ու ազատությանը միտված հստակ և իրատեսական ուղեգիծ: Երևանի Հայոց ազգային խորհրդում ունեցած իր ելույթում, նկատի ունենալով թուրքական վտանգը, Արամը շեշտեց, որ հայությունը պետք է հենվի իր ուժերի վրա՝ «թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար»[42]: Արամը ցուցաբերեց նախանձելի համառություն, արտակարգ կազմակերպչական ունակություններ և հետևողականություն ժողովրդի գիտակցության մեջ սեփական ուժերին ապավինելու գաղափարն ամրապնդելու և թշնամու դեմ համազգային շարժում կազմակերպելու համար: Նրա առաջարկությամբ ստեղծվեց Երևանի նահանգի իշխանության նոր մարմին՝ Հատուկ կոմիտե, որի նախագահ ընտրվեց ժողովրդի մեջ մեծ հարգանք վայելող Մ. Մուսինյանը: Սակայն ինչպես Հատուկ կոմիտեի, այնպես էլ Ազգային խորհրդի և Երևանի նահանգի փաստացի ղեկավարն

---

[38] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 45:
[39] Հուշեր Արմենակ Եկարյանի, էջ 233:
[40] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 45, ֆ. 57, ց. 5, գ. 102, թ. 44, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 51:
[41] Մ. Ներսիսյան. Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը.— «Պատմա-բանասիրական հանդես», 1995, №1, էջ 15:
[42] «Հայրենիք», 1964, № 4, էջ 70:

ու ոգին դարձավ Արամը: Շնորհիվ նրա ապակուսակցական ոգու՝ գործի լծվեցին ամենքը, անկախ կուսակցական պատկանելիությունից: Արամի առաջադրած սեփական ուժերին ապավինելու քաղաքական գիծն ամրագրվում էր կոնկրետ քայլերով: Այդ ուղղությամբ առաջին քայլը հայկական զորք ստեղծելն էր. անհրաժեշտ էր զորահավաք հայտարարել: Արամի գլխավորությամբ ազգային մարմիններն ու գործիչները ժողովրդի շրջանում քարոզչական լայն աշխատանք ծավալեցին: Արդեն 1917 թ. դեկտեմբերի 21-ին հայկական առաջին գունդը ռազմաճակատ ճանապարհելու առիթով Արամն ազդեցիկ ելույթով դիմեց ժողովրդին՝ կոչ անելով խտացնել հայրենիքի պաշտպանների շարքերը: 1917 թ. դեկտեմբերի 23-ին Հատուկ կոմիտեն հրապարակեց նրա հեղինակած «Կոչ հայ զինվորներին» շրջաբերականը, որը բոլորից պահանջում էր կանգնել հայրենիքի պաշտպանության դիրքերում: Հատուկ կոմիտեն զորակոչ հայտարարեց: Մրագրված էր հավաքագրել Երևանի նահանգի և Զանգեզուրի 20-32 տարեկան բոլոր հայ զինապարտներին: Վճռական պայքար ծավալվեց զորակոչից խուսափողների, դասալիքների, զենք-զինամթերք, պետական գույք հափշտակողների, անիշխանական այլ տարրերի, և հատկապես Թուրքիայի կողմից ուղղորդվող կովկասյան թաթարների (տեղական Թուրքեր) հակահայկական խռովությունների դեմ: 1918 թ. առաջին եռամսյակում հնազանդեցվեցին 50-ից ավելի թաթարական գյուղեր[43]: Զեռնարկված քայլերի շնորհիվ աստճանաբար ձևավորվում էր հայկական զինուժը, իսկ իրադրությունը երկրում կայունանում:

Ա. Մանուկյանը, որպես հայրենասեր և հեռատես քաղաքական գործիչ, դարավոր թշնամուց հայ ժողովրդի փրկության ճանապարհին երկրորդելով քաղաքական-դաղափարական իրողությունները, ազգային այլ գործիչների հետ փորձեց դաշնակից ձեռք բերել՝ ի դեմս բոլշևիկյան Ռուսաստանի: Այդ նպատակով նա հարաբերությունների մեջ մտավ Երևանի բոլշևիկների հետ, ինչպես նաև հեռակա կարգով մասնակցեց Թիֆլիսում Ռուբենի և ՀՅԴ այլ գործիչների կողմից Անդրկովկասի բոլշևիկյան ղեկավարների հետ տարվող բանակցություններին: Այդ ընթացքում ընդունվեց համագործակցության ծրագիր, որի առանցքը հայ-բոլշևիկյան ճակատի ձևավորումն էր Թուրքերի դեմ՝ Կովկասի, հետևաբար նաև Արևելյան Հայաստանի խորհրդայնացման պայմանով (Արևմտահայաստանը լինելու էր անկախ)[44]: Ռազմաքաղաքական զարգացումները, սակայն, անհնար դարձրին այդ գործակցությունը:

1918 թ. մարտի 24-ին, երբ Թուրքերը, զարգացնելով հունվարի վերջից սկսած հարձակումը, գրավեցին Սարիգամիշը, Երևանի ընակչությունը, ղոբքը և Հայոց ազգային խորհուրդը Ա. Մանուկյանին ընտրեցին Երևանի նահանգի «գիկտատոր»: Օժտվելով անսահմանափակ լիազորություններով՝ նա երբեք չփորձեց իրեն վեր դասել ազգային ու զինվորական կառույցներից և, նրանց հետ գործակցելով, շարունակեց նահանգի ռազմաքաղաքական իրավիճակի կայունացման դժվարին գործը: Արամի հաջողության կարևոր պայմաններից մեկն այն էր, որ նա լավ էր հասկանում,

---

[43] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 5:
[44] Ռ ո ւ բ ե ն. Հայ հեղափոխականի մը հիշատակները. հ. 7, Երևան, 1990, էջ 142-143:

որ հայրենիքի փրկությունը կախված է միմիայն ժողովրդի կամքից և ամեն ինչ անում էր այդ գործում նրան ներգրավելու համար: Այսպես, «դիկտատոր» ընտրվելուց հետո նա նշեց. «...դուք պիտի իմանաք, որ ես անուժ եմ առանց ձեզ: Հերոսը ինքը ժողովուրդն է և եթե ժողովուրդը պատրաստակամություն ունի... աշխատել ու փրկել հայությունը վերահաս կործանումից, ապա իմ ու ինձ նման շատերի աշխատանքը ապարդյուն չի անցնի»[45]:

...Շարունակելով հարձակումը՝ թուրքական զորքերը մայիսի 15-ին գրավեցին Ալեքսանդրապոլը, իսկ մայիսի 20-ին՝ Երևանից 30 կմ հեռու գտնվող Արաքս կայարանը: Ամբողջ սրությամբ դրված էր հայության լինել-չլինելու խնդիրը, այնինչ հայկական զորքի զգալի մասը կազմալուծվել էր, իսկ բնակչությունը խուճապահար գաղթում էր Երևան: Հայերի մեջ իշխող պարտվողական տրամադրությունները նույնիսկ հանգում էին Երևանից նահանջելու անհեթեթ մտքին:

Այդ բախտորոշ օրերին Ա. Մանուկյանը դրսևորեց թշնամուն հակահարված հասցնելու աներեր կամք և մեծագույն եռանդ: Ա. Աֆանասյանի դիպուկ ձևակերպմամբ՝ «Արամը, ինչպես Վարդանը Ավարայրում, ի հայտ բերեց այդ հիշարժան հերոսապատմանը վայել քաջություն»[46]: Դեռևս Ալեքսանդրապոլի անկումից առաջ Արամը՝ կանխատեսելով, որ թուրքերը չեն բավարարվելու նվաճածով, վճռականորեն արտահայտվել էր թշնամուն դիմադրություն ցույց տալու օգտին՝ նշելով. «Եթե երբեք մեր ճակատի վրա թուրքերը սկսեցին առաջխաղացումը, մենք անպայման պետք է դիմադրենք զենքով, թնդանոթով, ոչ թե ստրկորեն անձնատուր ըլլանք և կոտորվինք»[47]:

1918 թ. մայիսի 19-ի առավոտյան, երբ թշնամին նոր էր ներխուժել Արարատյան դաշտ, Երևանի շրջանում գործող հայկական երկրորդ դիվիզիայի հրամանատար, գեներալ Մովսես Սիլիկյանի հետ ունեցած հեռախոսազրույցում ճակատագրական համարելով զորքերի հետագա նահանջը և Երևանն էլ ավելի մեծ վտանգի տակ դնելը, Արամը պահանջեց նահանջի առաջն առնել և դիրքերը պահպանել: Արարատյան դաշտում թշնամուն հակահարված հասցնելու նախօրոք դրված խնդիրն իրագործելու համար նա խոստացավ երկու օրվա ընթացքում զորավարին տրամադրել անհրաժեշտ ամեն ինչ՝ մարդկային ուժ, զենք-զինամթերք և թիկունքի աջակցությունը[48]: Դրա համար էլ Ա. Մանուկյանը հրահանգեց անհապաղ, առանց տարիքի ու դիրքի խտրության ռազմաճակատ ուղարկել բոլոր զինապարտներին: Խստագույնս արգելվեց լքել քաղաքը: Արամը, որը նախընտրում էր ամեն ինչին անձամբ հետևել, «իբրև շարժական ոգի, ամեն տեղ էր՝ հրապարակներում, շուկայում, տներում, եկեղեցիներում և կոգևորներ իր խոսքերով ու կը ներշնչեր ամենքին»[49]: Մայիսի 19-ի երեկոյան

---

[45] «Զանգ», Երևան, 27.III.1918:

[46] Ս. Ա ֆ ա ն ա ս յ ա ն. Սարգարապատի հաղթանակը (Հայաստան. Մայիս 1918). Երևան, 1991, էջ 41:

[47] «Դրօշակ», Փարիզ, 1928, մայիս, №5, էջ 137:

[48] «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 30.I.1921: Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920թթ.) (կազմ. Ս. Բեհբուդյան). գ. Ե, Երևան, 1999, էջ 62:

[49] «Ճակատամարտ», 30.I.1921: Վավերագրեր հայ եկեղեցու պատմության. գ. Ե, էջ 63:

Ազգային խորհրդի նիստում հարց բարձրացվեց Երևանը թշնամուն հանձնելու մասին. Արամը ամենայն վճռականությամբ բացառեց դա՝ նշելով. «... ոչ մի նահանջ ոչ մի գծի վրա: Նահանջ Երևանից՝ կնշանակե խաչ քաշել մեր ամբողջ գործունեության և մեր ապագա քաղաքական մուրազների վրա, բոլորդ պիտի մնաք և մեռնիք»[50]: Այս վճռական կեցվածքը դարձավ Ազգային խորհրդի անխախտ վճիռը և զորքի հրամանատարությանը հանձնարարվեց այն ի կատար ածել:

Ա. Մանուկյանի ջանքերի շնորհիվ վերջ տրվեց նաև ազգաբնակչության շրջանում տիրող խուճապին: Մայիսի 21-ի երեկոյան քաղաքային խորհրդարանի ամառային շենքի հրապարակում (Սկետինգրինգում) կայացած հանրահավաքում, որում սկզբնապես տիրում էր հուսահատության մթնոլորտ, նա հանդես եկավ հակիրճ ելույթով. «...Ես եկել եմ հայտնելու ձեզ, որ թշնամին գրավել է Սարդարաբադը և շարժվում է դեպի Էջմիածին: Մեզ մնում է մի բան, կամ զենք վերցնել ու դուրս գալ թշնամու առաջ և կամ կոտորվել ոչխարի պես... Ով ուզում է ապրել, առանց բոպե կորցնելու, թող վերցնի զենքը, վերցնի նաև երեք օրվա պաշար ու իսկույն ևեթ դիմե ուսուցչական սեմինարիայի շենքը՝ ցուցակագրվելու և այնտեղից էլ ճակատ ուղարկվելու համար: Ես իմ ասելիքս վերջացրի, այժմ ձեզ է մնում անելիքը»[51]: Սարդարապատի հերոսամարտի մասնակից Մ. Մանասիրյանը տարիներ անց՝ 1968 թ., այս հանրահավաքի մասին խոսելիս, հիշում է, որ Ա. Մանուկյանը, գրող Դ. Դեմիրճյանը և այլոք ոգեշնչում էին ժողովրդին, կոչ անում անկախ տարիքից, սոցիալական գիրքից, քաղաքական համոզմունքներից զենք ստանալ ու մեկնել ճակատ: Ժողովուրդն էլ, արձագանքելով իրեն ուղղված հորդորներին, բացականչում էր, թե ավելի լավ է ճակատում զոհվել, քան սեփական օջախներում մորթոտվել[52]:

1918 թ. մայիսի 22-29-ին, զորավար Սիլիկյանի և փոխգնդապետ Ա. Վեքիլյանի մշակած պլանի համաձայն, հայկական զորքը գնդապետ Դանիել Բեկ Փիրումյանի անմիջական հրամանատարությամբ Սարդարապատի ճակատում հակահարձակման անցավ թուրքական գերակշիռ ուժերի դեմ և ծանր մարտերից հետո թշնամուն դուրս շպրտեց Արարատյան դաշտից[53]: Պարտված թշնամին հարկադրված նահանջեց Ալեքսանդրապոլ: Նույն օրերին հայկական զորքերը Դրոյի գլխավորությամբ թուրքերին ջարդեցին Բաշ-Ապարանի ճակատում:

Մայիսյան հերոսամարտերը, որոնց կազմակերպման գործում մեծագույն դեր ունեցավ Արամ Մանուկյանը, բացառիկ նշանակություն ունեցան հայ ժողովրդի համար: Բացառապես այդ հերոսամարտերի շնորհիվ հայ ժողովուրդը փրկվեց վերջնական բնաջնջումից և վերականգնեց Հայաստանի անկախությունը: Դրանով իսկ Ա. Մանուկյանը վիթխարի ներդրում ունեցավ նաև անկախ պետականության հիմքերի ամրապնդման

---

[50] Նույն տեղում:

[51] «Հորիզոն». 6.IX.1918:

[52] Մ. Մ ա ն ա ս ի ր յ ա ն. Հիշողություններ Սարդարապատի հերոսամարտից. տե՛ս ՀՀ պատմության պետական թանգարան, նոր պատմության բաժնի վավերագրերի ֆոնդ, բաժնի մատյան 960, մայր մատյան 12441, թ. 6:

[53] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 5, գ. 82, թ. 5: Ս. Ա ֆ ա ն ա ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 44: Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս. Երևան, 1998, էջ 95-96:

գործում՝ իրավացիորեն արժանանալով Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրի պատվավոր անվանը:

Դժբախտաբար, Ա. Մանուկյանին վիճակված չէր երկար ապրել և շարունակել հայրենանվեր գործունեությունը: 1918 թ. դեկտեմբերին նա վարակվեց հանրապետությունում մոլեգնող բծավոր տիֆով և 1919 թ. հունվարի 29-ին կնքեց իր մահկանացուն: Թաղմանը, հանգես գալով ՀՅԴ Արևելյան բյուրոյի անունից, Ն. Աղբալյանը նշեց. «... մենք այսօր պիտի թաղենք մեծ մարդը, որ հայ ժողովուրդը տված է մեծ պատերազմի ընթացքին: Ի՞նչ է մեծ մարդը – Մեծ մարդը ան է, որ գիտե ըմբռնել ժամանակի հարցը և որո՞նք էին այս վերջին շրջանի մեծ հարցերը, որ համայն հայ ժողովրդին կպատկանեին – հայ ժողովրդի պաշտպանության և ազատության հարցերն էին ատոնք ...Վանը բոլորի հիշողության մեջն է, հոն – Արամը հանդիսացավ հայու հերոսական ոգին, փրկելով անոր ռազմական պատիվը: Երևանը վկա էր այն հզոր ուժին, որ կար և կապրեր անոր մեջ, որ կազմակերպեց դիմադրության ուժը և այդ դիմադրության շնորհիվ կարողացավ հիմք դնել Հայաստանի Հանրապետության, հայ ժողովրդի ազատագրության»[54]:

Այսպիսով, հայ ժողովրդի համար բախտորոշ 1915 և 1918 թթ. հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ Արամ Մանուկյանը գտնվում էր թուրքական տիրակալության դեմ պայքարի առաջավոր գծում և ամեն ջանք գործադրում իր ժողովրդի գոյությունն ու ազատությունը ապահովելու համար: Թե՛ Վանում և թե՛ Երևանում նա աչքի ընկավ քաղաքական հասունությամբ ու հեռատեսությամբ, կազմակերպչական բացառիկ ձիրքով, անկոտրում կամքով, մեծագույն պատասխանատվությամբ իր ժողովրդի ճակատագրի նկատմամբ: Գործակցելով հասարակական-քաղաքական բոլոր ուժերի հետ՝ Ա. Մանուկյանը կարողացավ կազմակերպել հայության միասնական պայքարը թուրք ոճրագործների դեմ՝ հետագա սերունդների համար հաստատագրելով այն իրողությունը, որ ծանր կորուստներից խուսափելու և ազգային ձգտումներին հասնելու միակ ուղին ազգային հավաքական գործունեությունն է:

АРАМ МАНУКЯН
В ГОДЫ ВЕЛИКОЙ АРМЯНСКОЙ ТРАГЕДИИ

АРМЕН АСРЯН

Резюме

Армянский народ в начале XX в. подвергся серьезным испытаниям. Младотурецкое правительство Османской империи, продолжив националистическую политику монархии по отношению к нетурецким народам, по заранее заплани-

[54] «Աշխատանք», 12.II.1919, №4, Ս. Վ ր ա ց յ ա ն. Կյանքի ուղիներով. հ. Ե, էջ 54–55:

рованной программе истребило в 1915 г. около полутора миллиона западных армян с целью освоить их исконные земли и навсегда решить Армянский вопрос. Политику геноцида армянского народа младотурецкие правители проводили и в Восточной Армении в 1918 г. В годы Первой мировой войны Арам Манукян (1879—1919) всячески стремился уберечь армян Вана от широкомасштабных погромов турок. В апреле 1915 г., он в сотрудничестве с другими политическими силами, организовал самооборону Вана. Благодаря этому, а также с помощью подоспевших русских войск и армянских добровольческих дружин, армяне Вана в основном спаслись от резни. В критические месяцы первой половины 1918 г. Манукян, проявив политическую дальновидность, решимость и непоколебимую волю, смог объединить широкие социально-политические слои общества, талантливых военных во имя сплоченной борьбы против турецких завоевателей, благодаря чему армянский народ не только спасся от окончательной резни, но и восстановил свою утраченную государственность. За этот вклад Арам Манукян справедливо удостоился имени основателя первой Республики Армения.

ARAM MANUKIAN IN THE YEARS OF THE GREAT ARMENIAN TRAGEDY

ARMEN ASRYAN

Summary

At the beginning of the 20th century Armenian people underwent terrible ordeals. The government of Ottoman Empire (The Young Turks) going on with their nationalistic policy of monarchy with respect to non-Turkish people, according to a pre-arranged program, annihilated about 1,5 million Eastern Armenians to master their native lands and to solve the Armenian problem once and for all. Ottoman government pursued the genocide policy of the Armenians in Eastern Armenia in 1918, too. During World War I Aram Manukian (1879–1919) struggled a lot to keep the Armenians of Van from massacres. In the April of 1915 cooperating with other political forces he organized the self-defence of Van.Thanks to that and also with the help of Russian troops and Armenian volunteers, the Armenians of Van mainly were saved from slaughter. During the critical months of the first half of 1918 Manukian, showing political foresight, resolution and firm will, managed to unite large social-political strata of society, talented soldiers for a solidary fight against Turkish conquerors, and owing to that Armenian people were not only saved from a final carnage, but also reestablished the lost state system. For that contribution Aram Manukian was justly honoured with the name of the founder of the first Republic of Armenia.